ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«05» 02 2024 թ.
№ ԳԼՈՒ-942-25

«ՊՐՈ-ՄԵԴ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 01325663
ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 47, բն. 5
հեռ. +374 77 667566
էլ. հասցեն՝ Aghamalyankar@yandex.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՊՐՈ-ՄԵԴ» ՍՊ ընկերության միջև 16.05.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-9/10-10 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 02.08.2023թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՊՐՈ-ՄԵԴ» ՍՊ ընկերությունը ոչ ուշ քան 05.12.2023թ. պետք է մատակարարեր 5 լրակազմ Գրամ ներկերի հավաքածու, որոնց մասով Պայմանագրով և դրան կից կնքված N1 Համաձայնագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ՊՐՈ-ՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. փետրվարի 5-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը և Համաձայնագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՊՐՈ-ՄԵԴ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 840 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.12.2023թ. և 600 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն),

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 12,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 18,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. փետրվարի 14-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 12,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 18,000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՊՐՈ-ՄԵԴ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. փետրվարի 14-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ